

Ա Է Ե Տ Ա Բ Ե ր



« ԹՈՂ ՏԱՌԻՐ ՄԱՆԵ ՏՂԱՅԸ ՈՐ ԻՆՉՆ ԳԱՆ » : ՂՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Գ .

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ . ՅՈՒՆԻՍԻՐ 1 . 1876 .

ԹԻՒ 1



« ՔԱՅԱՆԱՅԱՊԵՏԸ ԽՈՒՆԿ ԿԸ ՄԻՆԵՐ ՏԵՐԱՉԸ ԱՌՁԵՒ »

ՏԱՐԵԿԱՆ ԲԱՌՈՒԹԻՒՆԸ

Հրէից հին օրինաց համեմատ, քահանայապետը տարին մէկ անգամ տաճարը կը մտնէր, և հան սրբութեանց սրբութեան մէջ, որ միայն նա կրնար մտնել, ժողովրդեան մեղաց համար քառութեան գոհ կը մատուցանէր: Քահանայապետը վաբա-

ղաղին ներսիդին մինակ մտալով խառնկ կը ծխէր ՏԵՐԱՉ ԱՌՁԵՒ, և անտարախոյս ահիւ կը յիշէր այն պատուիրանը որ այսպէս ընել կը պահանջէր անիկ, որ չվեռնի: Անիկ ետեւ արիւն կը սրտիէր այն տեղն ինչոն այն արեան որ թափեցաւ բոլոր մարդոց մեղաց համար:

Այս արարողութիւնը կը կատարուէր մեծ հանդիսիւ: Քահանայապետն իր պաշտաման զգեստները հագնելէն առաջ մարմինը ջրով կը լուար, նաեւ այն մարդիկը, որ այն օրը զոհերը կ'այրէին, բանակը դառնալէն առաջ պարտաւոր էին իրենց մարմինները և զգեստները լուալու: Բոլոր ժողովուրդն ալ հանդիսաւոր ծովագահելու համար դործէ կը դադրէին այն օրը: Այսպէս Իսրայէլի որդիքը տարին մէկ անգամ մը իրենց մեղքերը կը յիշէին և անոնց վրայ կուլային, և քահանայապետը ժողովրդեան բոլոր մեղաց համար քառութիւն կ'ընէր:

Մեր քահանայապետը նման չէ Հրէից քահանայապետին որ տարին մէկ անգամ միայն սուրբ տեղը կը մտնէր ժողովրդեան քառութիւն ընելու: Մեր քահանայապետն է Յիսուս Քրիստոս որ միշտ մեզի համար կը բարեխօսէ: Եւ հիմա այս նոր տարուոյս սկիզբը մենք ամէնքս ալ յիշելու ենք զանի և մեր կարօտութիւնը քառութեան: Տարուոյն առաջին օրն որ մը ըլլայ յիշելու այն օրհնութիւնները զորս Աստուած մեզ տուաւ. նաեւ որ մ'ըլլայ յիշելու մեր մեղքերն և մեր ՏԵՐՆ որ զմեզ կ'ազատէ անոնց արատէն: Ուստի նոր տարուոյն սկիզբը նորէն զմեզ Աստուծոյ ծառայութեան նուիրենք, որ այս 1876 տարուոյն մէջ բուրրովին անոր համար ապրինք:

ԱՌՆԵՄ, ԹԻ ՈՉ

Փոքր տղայ մը առանձին մտացած էր սենեակ մը, ուր արկղի մը մէջ շաքար կար. հան փոքրիկ տղուն ներսի դին, անոր սրտին և խղճին մէջ տեղ, այս խօսակցութիւնը տեղի առնեցաւ:

Գեղ-Կեր: «Շաքարն անուշ է:»

Խնչե: «Այո:»

Գ. Ս. «Շաքար չես սիրեր:»

Խ. «Անտարակոյս կը սիրեմ:»

Գ. Ս. «Ինչո՞ւ ուրեմն թիչ մը չես առներ:»

Խ. «Յանցանք գործած պիտի ըլլամ:»

Գ. Ս. «Ո՛չ. ինչ որ մօրդ է, քուկդ ալ է:»

Խ. «Բայց հրաման չունիմ զայն առնելու:»

Գ. Ս. Մայրդ պիտի չդիմանայ:»

Խ. «Աստուած գիտէ:»

Գ. Ս. «Շաքարն աման է. ուտելէք ինչ փրատ կայ:»

Խ. «Գողնալ է. կ'ուզեմ շաքար ուտել, բայց Աստուած Մի գողնար՝ ըսած է. ուստի այս շաքարը պէտք չէ որ առնեմ:»

Այսպէս խօսելով փոքրիկ սղան կռնակը արկղին դարձուց և սկսաւ խաղալ, որպէս զի սխալ բան մը ընելէ ապահով ըլլայ:

Սիրելի ընթերցողս, այսպիսի պարագայի մը մէջ դուն ինչ պիտի ընէիր: Քու ներսիդիդ ալ երբէք այսպիսի խօսակցութիւն լսած ես: Միշտ զգոյշ եղիր, և այնպէս ըրէ, ինչպէս խիղճդ քեզ կ'ըսէ, և աղօթէ Աստուծոյ որ քեզ օգնէ:

ԴԱՐՔԻՆԻՆ ԱՇԱԿԵՐՏԸ

Տես սա ծոյլ տղայն, որ դարձի ժամանակ պարագ կը կենայ:

Ոչ, դորձի ժամանակ ան պորտոպ կեցած չէ, այլ գիրք կը կարդայ, մինչդեռ իր վարպետը հանգիստ կ'առնէ: Այս տղայն չէր կրնար դպրոց երթալ, վասն զի հայրը աղքատ կոչկակար էր, ուստի և անկարող տղան դպրոցի ծախքն հողալու: Բայց տղայն կ'ուզէր կարդալ. բոլոր օրը դարբնոցին մէջ աշխատելու ստիպուած էր, սակայն գիտուն ըլլալու փափաքը ամենեւին սրտէն չէր հաներ: Իր քով գիրքեր կը պահէր, և երբ քիչ մը հանգչելու հրաման կը տրուէր անոր, նա փոխանակ պարագ կենայու, գիրք մը կ'առնէր և կը կարդար միշտ: Այսպէս յաջողեցաւ Երբայեցեբէն սորվիլ, և Սուրբ գիրքին բնագիրը կարդալ: Նաև սորվեցաւ աշխարհագրութիւն, չափադիտութիւն և ուրիշ շատ օգտակար բաներ:

Երբ տաք երկաթը սալին վրայ կը ձեծէր, դու արձանապով կը խորհէր. Եթէ մէկ ու կէս կանդուն



«ՏՂԱՆ Կ'ՈՒԶԷՐ ԿԱՐԴԱԼ»

լայնութիւն ունեցող կտաւը մէկ մասնաշափ լայն շերտերու կըտրելով, այն շերտերը ծայր ծայրի կարէինք, որչափ կտաւի պէտք պիտի ունենայինք երկրէս մինչև արեգակը համներու համար: Գարբին սղան այս հաշիւն ընելու համար իր գործը չէր թողար, այլ մտքով կը կատարէր: Կարծեմ թէ դպրոց դպրոց տղոցմէ շատերը զրով անդամ կարող չեն լուծել այս խնդիրը, ուր այս դարբին տղան մտքով միայն կը լուծէր:

Այս տղան անուճն էր Իլայհու Պէրիթ, և այժմ շատ գիտուն ձեռունի է, յարգելի և սիրելի բոլոր իր ծանօթներուն:

Տղայոց Աւետարեթի համար.

ՓՈՒՔԻԻ ԾՈՒԹ ԾԱՌԸ

Սեղբորայ և Միսթրոյ հայրն իր որդւոց իւրաքանչիւրին մէկ մէկ փոքրիկ ծառ և քիչ մ'ալ տեղ տուաւ, որ այն ծառերը հոն դնեն: Տղայքն այս բանին վրայ շատ ուրախացան, և առջի բերան մեծ հող աարին իրենց ծառերուն, որ գեղեցիկ կերպով կ'աճէին: Ետքը Սեղբորայ ծառը սկսաւ ծախլ, բայց Սեղբոր հող չէր ընել ու չէր շտկեր զայն: Մի-

տաք իր ծառին քով ձող մ'ալ դրաւ, և միշտ խնամ կը տանէր իր ծառին, ուստի անոր ծառը շիտակ և գեղեցիկ ծառ մ'եղաւ: Ժամանակ մ'ետքը Սեղբոր տեսաւ թէ որչափ ծուռ էր իր ծառը, և ջանաց զայն շտկել, բայց չկրցաւ վասն զի շատ մեծցած էր: Ալ ժամանակն անցած էր:

Փոքրիկ բարեկամներս, դուք ալ փոքրիկ ծառեր էք, բայց ամէն օր կ'աճէք: Եթէ անհոգ և անհնազանդ էք, ծուռ պիտի մեծնաք, և երբ չափահաս մարդ կամ կին ըլլաք, այն ատեն ձեր ծուռ անդերը շտկելու ժամանակն անցած պիտի ըլլայ:

Եթէ ձեր աղայութեան ատեն դուք սիրելի և հնազանդ էք, երբ մեծնաք, բարի մարդ և բարի կին պիտի ըլլաք, ուստի և ամէն մարդէ պիտի սիրուիք:

ՊԱՏՈՒԱԾ ՓՂԱՊԱՆ ՄԸ

Փիղերը երբ աղէկ կը հողացուին, շատ սիրով կը կապուին փղապաններուն հետ, և կը հնազանդին անոնց հրամաններուն ինչպէս տղայք իրենց ծնողաց: Սակայն փղապաններն երբեմն անդու թ մարդիկ ըլլալով, փղերուն հետ փոխանակ սիրով վարուելու, առանց պատճառի զանոնք կը խթեն և կը պատժեն:

Օր մը նոր փղապան մը դրուեցաւ փղի մը քով, որ արդէն սիրայի վարմունքի վարժուած էր: Նոր փղապանը եթէ խեղցի ըլլար, փղին հետ անուշ վարուելով անոր սիրոյն կ'արժանանար:

Փոխանակ այսպէս ընելու, փղապանն առանց բանաւոր պատճառի սկսաւ զայն նեղել. վերջապէս փիղը համբերութիւնը կորսնցուց, և փղապանն իր կնճիթին վրայ առնելով գետնը գնաց և քանի մ'անդամ զանի ջուրին մէջ ընկղմելէն ետքը թող տրուաւ: Վստահ եղիք որ ասոր վրայ փղապանն իր փղին հետ անուշ վարուելու կերպը սորվեցաւ և վերջապէս փիղն ալ սկսաւ զայն շատ սիրելու: Սէրը սէր կը բերէ:

ԱՐԵՊԱԿԸ

Ինչ այնպէս կ'երկի թէ ձենէ շատերը կը կարծեն որ արեգակը մեզի լոյս և ջերմութիւն տալու համար երկինքը կախուած հրեղէն գունդ է. և ձեր

այս կարծիքը քանի մը նկատմամբ չիտակ է: Արդարև արեգակը լոյս և ջերմութիւն կու տայ մեզի, բայց ոչ թէ միայն մեզի: Մեր բնակած երկրին պէս ուրիշ շատ մարդակներ կան որ իրենց լոյսն ու ջերմութիւնն արեգակէն կ'առնեն:

Դուք կը խորհիք որ երկիրը շատ մեծ է, բայց պէտք է գիտնաք որ արեգակն երկրէս միլիոնապատիկ աւելի մեծ է, և կեդրոն է մեր արեգակնային գրութեան, այսինքն բոլոր մարդակաց, և մեր երկիրը արեգակին բոլորակը կը գառնայ:


Երկիրը տարին մի անգամ արեգակին բոլորակը կը գառնայ, և մէկ ժամու մէջ 68,000 մղոն կամ թէ 22,000 ժամ տեղ կը քալէ: Թեքուս չէիք գիտեր թէ երկիրն այսչափ արագ կը գառնայ:

Արեգակը մենէ 93,000,000 մղոն հեռու է, և լոյսն արեգակէն մինչև մեզ կը հասնի ութ վայրկեանի մէջ: Ուստի յայտնի կ'երևի թէ լոյսը շատ արագընթաց է, վասնզի մէկ վայրկեանի մէջ 12,000,000 մղոն տեղ կ'երթայ:

Արեգակին մէկ օրը մեր երկրին քսան և հինգ օրուան հաւասար է:

Եթէ դուք արեգակին մէջ ըլլայիք, ձեր ծանրութիւնը հիմակուանին քսան և հինգ անգամը կ'ըլլար:

Աստղաբաշխներէն ոմանք կ'ըսեն թէ արեգակը հրեղէն հեղուկ գունդ է. ոմանք ալ կ'ըսեն թէ երկրիս պէս կարծր մարմին է, և ունի իր բոլորակը միտրորտ մը, ուրիշ լոյսն և ջերմութիւնը կուգան մեզ: Աստղաբաշխից թողունք այս խնդիրը լուծել, եթէ կրնան. բայց շնորհակալ ըլլալու ենք Աստուծոյ, որ այսպիսի գեղեցիկ և առողջարար արեգակ տուած է մեզ:




ՍԷՆՈՎԱՍԻ ԱՒԱԶԱՆԸ

ՄԱՐԿՈՍԻ ԵՐՈՒՍԱԿԷՄ ԵՐԹԱԼԸ


Մարկոս Երուսաղէմ գնաց քաղաքը և հոն գտնուած զարմանալի բաները տեսնելու: Անգամ մը երբ

Մարկոս հօրը հետ պատելու ելաւ տեսաւ այն մեծ քարերը, որոնք Մողմանի տաճարին հիման քարերն էին: Անկէ առաջ երթալով Սիօն և Մարիա լեռանց մէջտեղի խոր ձորը, և ձախ կողմը տեսան քաղաշէն ցած պատ մը որուն համար Մարկոսին հայրն ըսաւ թէ Սէլուսի աւազանն է: Մարկոս հարցոյց, « Հոն էր արդեօք այն աշտարակը, որ կարծանած ատեն այնչափ մարդ սպաննեց: » « Թեքուս, » ըսաւ հայրը. « բայց այն աշտարակին վրայ շատ անգլեկութիւն չունինք: Այս այն առաջնն է ուր աշտարակը լուալու գրիկեց Յիսուս կայրը, որուն աչքը բացուաւ: » « Իմ ալ աչքս կը ցաւի, » ըսաւ Մարկոս. « կ'ուզեմ հոս լուալ և տեսնել թէ այս շուրը աչքիս ցաւը պիտի փարատէ: » « Ոչ, » ըսաւ հայրը, « ինչպէս հասարակ շուրը չկրնար ցաւ փարատել, կայր մարդուն աչքը բացողն ալ ոչ թէ այս շուրն, այլ Քրիստոսի խօսքն էր: » Լեռնէն վար իջնելով անցան ջրհորի մը քովէն, որ



« ԿԵԴՐՈՆԻ ԶԵՆԵԼԱՏՆ ԱՆՈՆՑ ՈՏԲԻՆ ՏԱԿՍ ԷՐ »

Այս միջոցին կեդրոնի հեղեղատին ձորին մէջն էին (Բ. Թագ. 23): Կեդրոնի հեղեղատին շուրը ցամբած էր. այն տեղին ձախ կողմը ուրիշ ձախ հեղեղատը կը վաղէր, բարձր տեղ մը կար: Երբ հոն հասան, կանգ առին հանգչելու և քաղաքը գիտելու: Կեդրոնի հեղեղատն անոնց սարին տակն էր, և ձախ գին էր Ենովմի սրբուհին ձորը, ուր կը պաշտուէր Մողմը, և ուր Յովիա Բահազի քուրմերը շարդեց (Գ. Թագ. 19): Ենովմի ձորին վրայի բլուրին ստորաքաղաքն Ապոլոնիան, այն արաբ զոր Յուզա գնեց իւր երեսուն արծաթովը: Անկէ անդին է Երուսաղէմ « մեծ թագաւորին քաղաքը, » որոյ ձախ կողմն է Սիօն լեռը, և ալ կողմը Մարիա լեռը: Քաղաքին Մարիա լեռան վրայի պատէն կը տեսնուէր Գուպղէ-էս-սահրա կոչուած մզկիթին գմբէթը: Այս մզկիթը հին տաճարին տեղն է և շատ մարդիկ այնպէս կը հաւատան թէ Աբրահամ այս տեղ պատրաստութիւն տեսաւ Իսահակը գտնելու: Դուք այս պատկերներուն մէջ կրնաք տեսնել, ինչ որ Մարկոս և անոր հայրը տեսան իրենց պատած ատեն, և Սուրբ գրոց մէջ այս տեղերուն վրայ ուրիշ շատ բաներ կը պատմուին:



ՅՈՒՏԱՅ ԶՐՈՐԸ

Յորայ ջրհոր կ'ըսուի: « Յոք փորեց այս ջրհորը, » հարցուց Մարկոս իր հօրը: « Չգիտցաւի, » ըսաւ հայրը, « թէ ինչպէս ջրհորն այս անունը առած է, » և յարեց. « չէս յիշեր թէ, երբ Աբիսողոմ Դաւթի դէմ ապստամբեցաւ, քահանայից սրգիքը Դաւթի լուր բերին: » « Այո, այո, կը յիշեմ, » ըսաւ Մարկոս. « անոնք ջրհորի մը մէջ պահուեցան: » « Այո, » ըսաւ հայրը, « և անկէ առաջ Ռովբելի աղ-

Տղայոց Աւետարեթի համար

ԱՄՊ ԵՒ ԱՐԵՒ

Բաց և պայծառ օգի մէջ ամէն բան ինչպէս հաճելի կ'երևի. իսկ երբ

երկինք ամպամած է, ամէն բան ինչպէս տխուր երևոյթ կ'առնէ: Սիրելի ազգաս, դուք երբ դպրոցէն ստան կը դառնաք, ամէն թէ արև կը բերէք:

Եթէ գուցէ ձեր մտքը հնազանդ էր, երջանիկ գեղարվեստ անուշ ձայնով աննոց ու ձեր վարժարանի քայրերուն կամ եզրագրերուն օգնելու պատրաստ էք, այն ստան ձեր մայրերը ձեր դպրոցէն գալը տեսնելով պիտի ըսեն: «Ահա կուգայ մեր արեւը, որչափ ուրախ ենք»: Փորձեցէք, և պիտի տեսնէք թէ որչափ քաղցր է ձեր մայրերն այսպէս երջանիկ տեսնել:

ՁԵԱՆ ՄԷՋ

Ձմեռը դարձեալ եկաւ, և դեռ չենք ձիւնով ծածկուեցաւ. աշոյրք ձեան գնդակներ կը նետեն իրարու, կամ դահա կերակով կը սահին ձեան վրայէն և կամ մեծամեծ տախտիկներ կը շինեն ձիւնով:



«ՄԱՐԿՍ ԵՍ ՎԱՆՅԱԻ»

Թողնաւ և Սամուէլ ձիւնէ մտրդ մը շինեցին, որ ամառի փոշով տեցած խոշոր աչքեր, թիթ, բերան ու ներք, ձեւքն ալ դառազան մը: Լուսիս իր փոքր քայլը Արթուրի հետք բերած էր որ այս ձիւնէ շինուած մտրդը տեսնէ: Բայց Մարիամ անոր երեսը տեսնելով շտա փակցաւ, ու պռուշով իր երեսը Լուսիսին այտերուն վրայ ծածկելու ջանաց, և խնդրեց իր քայլերն որ ետ դառնան իրենց տարակուսանք, ուր ոչ ձիւն և ոչ ձիւնէ շինուած ահաւոր մտրդ կայ:

Տղայց Աւետարանի համար.

«ԵՍ ԵՄ ՃԵՄԱՐԻՑ ՈՐԹՈՂ»

Պարտիզպան մը այգի մ'ունէր, որուն մէջ կային շատ սպիւղալից որթեր: Օր մը այգուին մէջ պարտած ստան տեսաւ որ որթի մը բոլոր ճիւղերը խոշոր և քաղցրահամ խաղող

ներով լցուած էին, բայց միայն մէկ հասն անպտուղ մնացած էր: Այս ճիւղն ունէր գեղեցիկ տերևներ և ամէն կերպով զօրաւոր էր, բայց պտուղ բերած չէր: Պարտիզպան այս ճիւղին վրայ նշան բրաւ, և երբ յարմար ժամանակն եկաւ, դայն կարեց ու վառեց, Հեռեեալ տարին երբ պարտիզպանը դարձեալ իր այգուին մէջ կը պտուղէր, տարօրինակ ձայն մը լսեց, դարձաւ չորս դին նայեցաւ և տեսաւ որ որթերէն մէկուն գեղեցիկ մէկ ճիւղն այսպէս կը խօսէր: «Ինչո՞ւ ես հոս չուրք մնամ, և ան ջուրին քովը, բայց օդին մէջ անուշահոտ վարդերու մտրը չերթամ: Արդարև հոն ալ կրնամ պտուղ բերել ինչպէս հոս այս որթին կցուած տաննա»: Ուստի այն ճիւղն ելաւ միւս կողմը դեռայ, բայց երբ ծաղաւի էր, չէր կրնար ջուր խմել, վասն զի արմատ չունէր: Արեւին տարութիւնն ալ զարկաւ անոր, և դայն թառամեցաւ: Խեղճ ճիւղ, որչափ սխալմանը ըրաւ:

Սիրուն տղաքս, Յիսուս որթ է և մենք անոր ճիւղերն ենք. երբ պտուղ չբերենք, դուրսէն որչափ գեղեցիկ ալ ըլլանք, պիտի կարուինք և գոթուք պիտի ձգուինք: Եթէ վերայիշեալ ճիւղին նման վարձերը ինքնին պտուղ տալ, պիտի կորսուինք: Պետք է որ մենք ի Բրիտանոս հաստատուած ըլլանք, և ինքրենք անկէ որ մեզի օգնէ և առաջնորդէ: Միայն այսպէս կրնանք բարի պտուղ բերել: Յովհաննէս Աւետարանչին թե գլխոյն առաջին մասը կարգացէք:

ԵՍ ԱՃԱՆ ԾԱՌԱՅ ՄԸ

Յակոբ անցեալ օր Ստեփանին բարկանալով, անոր այնպիսի խօսքեր ըստաւ, որ լսելն անգամ մարդու սուկում կը պատճառէ: Բարեպաշտ անձ մը այն խօսքերը լսելով ըստա Յակոբին: «Տղա, դուն այս կերպով խօսելու համար ստանալէն ի՞նչ վարձք կ'առնես»: Յակոբ շատ զարմանալով, «Ոչինչ» պատասխանեց: Ան տեսն մարդն ըստա անոր: «Ուրեմն շատ աւժան կ'աշխատես: Դուն Աստուծոյ պատուիրանները կը կտորես, ծնողացդ սիրտը կը կտորես, քու կեանքդ ալ կը մոռնայես այսպիսի գէշ լեզու մը սորվելով, և կոկորդդ պատու-

լով կը պտուս այն գէշ խօսքերն ըսելու համար, և կ'ըսես թէ փոխարէն վարձ մը չես ընդունիր: Ես աւժան կ'աշխատես ստանալին համար»:

ԳԵՆԵՍԵՐԻ ԶՐԹՄԱՆ ՊԱՏԱՍԻԱՆ

Գործք Առաքելոց Թէ գլուխ

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ



ը պատմուի Աստուածաշունչին մէջ աննոց համար թէ սկիւմայ իրենց պղտիկներէն զատուեցան: Այնպիսի ճամբէ մը գացին, ուրկէ սուալ բնաւ դացած չէին. բայց Աստուած աննոց առաջնորդեց:

Այնպիսի գործ մ'ըրին զոր սուալ բնաւ ըրած չէին. բայց Աստուած սորվեցուց աննոց: Աննոց ետէն ինկան մեծ ազգի մը բարձրատիճան մարդիկն, որոնք ակնդէտ կը սպասէին որ տեսնեն, թէ աննք իրենց բնելու գործն ինչպէս ըրին: Աննք Աստուծոյ զօրութիւնը կամ կարողութիւնը հեթանոսաց սորվեցնելու միջոց եղան, և Աստուծոյ մեռան, բայց և այնպէս զԱստուած չգիտէին:

Այս հանելուկն Աստուածաշունչի ո՞ր պատմութիւնը մեզ կը ներկայացնէ:

Այս հանելուկին պատասխաններուն համար պիտի սպասենք մինչև մարտի 20: Այն ստան բոլոր պատասխանները պիտի քննուին: Երազդուութեան, ուղղաբութեան և գեղեցկագրութեան կողմանէ ամենէն ալեկ գրուած պատասխանը պիտի հրատարակուի ապրիլ ամսոյ Տղայոց Աւետարանին մէջ, և դրոջ տղայն պարգև պիտի ընդունի 1876ին Տղայոց Աւետարանը: Այս պարգևին համար մրցող տղայք 16 տարեկանէ աւելի ըլլալու չեն, ուստի պատասխան գրողներն իմացնելու են իրենց տարեքը: Կը պահանջուի նաև որ իրենք ըլլան պատասխանին հեղինակը, ոչ թէ ուրիշի մը հեղինակութիւնը օրինակելով դրկեն:

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն
Մ. Գ. Կ. Կ. Կ. Կ. Կ.

ԿՈՍՏԱՆԳՆՈՒԳՈՒԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Չազմագործը, Յակոբեան խան, Թիւ 12.